ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՔԿՎ(17)-1»

ք. Երևան <<24>> փետրվարի 2017թ.

<<ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը>>, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս վարչության պետ Ա. Օսիկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՐԿՈՄԱՎՏՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **7127900** (յոթ միլիոն հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **չորս** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն	«ԿԱՐԿՈՄԱՎՏՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակ. 1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 217002121630-001
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 00131374
Վարչության պետ՝	տնօրեն՝
Ա. Օսիկյան	Ա. Հովսեփյան
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<25>> փետրվարի 2017 թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՔԿՎ(17)-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	1 չափաբաժին					
		Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների					
		ԳԱԶ,ՌԱՖ մակնիշի ա/մ	ՎԱԶ Մոսկվիչ մակնիշի առջևի և հետևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա, ՈՒԱԶ)	«Սադկո» մակնիշի բեռնատար և «ՊԱԶ» մակնիշի ավտոբուսա/մ	5տեղ մարդատար առջևի և հետևի տանող ա/մ	4x4 տիպի և միկրոավտոբուս միհիվեն տիպի ա/մ
1	2	3	4	5	6	7	8
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ				Այլ պետությունների արտադրության մեքենաներ	
	1.Շարժիչ						
1	Բռնկման համակարգի ստուգում	3000	3000	3000	5000	5000	5000
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3000	3000	3000	5000	3000	3000
3	էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0	0	0
4	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	500	500	500	500	500	500
5	Շարժիչի հանում և տեղադրում	20000	20000	20000	40000	40000	40000
6	Շարժիչի վերանորոգում	35000	25000	25000	40000	80000	80000
7	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	15000	15000	15000	15000	20000	20000
8	Շարժիչի գլխիկի վերանորոգում	10000	10000	10000	10000	10000	10000
9	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	2000	5000	2000	3000	5000	5000
10	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	5000	5000
11	Փականի խցուկի փոխարինում	100	100	100	100	100	100
12	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	100	100	100	100	100	100
13	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	0	1000	0	0	1000	1000
14	Ատամնավոր փոկի փոխարինում	0	4000	0	0	15000	15000
15	Ծնկաձև լիսեռի խցուկի փոխարինում	100	100	100	100	100	100
16	Մխոցային օղակների փոխարինում	100	100	100	100	100	100
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ						
17	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1000	1000	1000	2000	3000	3000
18	խարնարակի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	0	0
19	Խարնարակի վերանորոգում	5000	5000	5000	5000	0	0
20	Օդի զտիչի փոխարինում	1000	1000	1000	1500	2000	2000
21	Ինժեկտորի ֆորսունկաների հանում և տեղադրում	9000	9000	9000	9000	9000	9000
22	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	9000	9000	9000	9000	9000	9000
23	Բենզամղիչի փոխարինում	2000	4000	4000	4000	8000	8000
24	Վառելիքի զտիչի փոխարինում	1000	1000	8000	2000	2000	2000
	3. Սառեցման և արտածման համակարգ						
25	Փոկի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	5000	5000
26	Հովհարի հանում և տեղադրում	3000	3000	5000	5000	5000	5000
27	Ռադիատորի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	8000	8000
28	Ռադիատորի վերանորոգում	5000	5000	5000	5000	5000	5000
29	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5000	5000	5000	5000	5000	5000
30	Թերմոստատի փոխարինում	3000	3000	3000	3000	6000	6000
31	Ջրի պոմպի փոխարինում	4000	4000	7000	7000	8000	8000
32	Խլարարի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	4000	4000
33	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1500	1500	1500	1500	2000	2000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ						
34	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	3000	3000
35	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000

36	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	100	100	100	100	100	100
37	ՓՏ-ի հանում և տեղադրում	10000	10000	20000	25000	50000	50000
38	ՓՏ-ի վերանորոգում	15000	10000	10000	20000	1000	1000
39	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	500	500	500	500	500	500
40	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000	1000
41	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	500	500	500	500	500	500
42	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	0	0	0	0	10000	10000
	5. Կախոց						
43	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	2000	2000	2000	3000	0	8000
44	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	1000	1000	1000	2000	0	5000
45	Տրավերսի հանում և տեղադրում	5000	8000	12000	10000	30000	30000
46	Հոդակապի հանում և տեղադրում	0	4000	6000	6000	8000	8000
47	Անվակունդի առանցքակալի փոխարինում	3000	4000	4000	4000	8000	8000
48	Զսպակի վռանների փոխարինում	4000	0	4000	4000	4000	4000
49	Հարվածամեղմիչի հանում և տեղադրում	1500	4000	1500	5000	5000	5000
50	Լծակի հանում և տեղադրում	3000	3000	4000	4000	8000	8000
51	Լծակի վռանների փոխարինում	1000	1000	1000	1000	2000	2000
52	Ղեկային ձգանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	3000	3000
53	Գնդե հոդակապերի փոխարինում	1500	1500	1500	1500	1500	1500
54	Ծայրակաների հանում և տեղադրում	1000	2000	1000	1500	1500	1500
55	Կայունարարի վռանի փոխարինում	2000	2000	2000	2000	3000	3000
56	Հետևի մետաղածողի հանում և տեղադրում	1000	1000	1000	2000	2000	2000
57	Կայունարարի կանգնակի հանում և տեղադրում	500	1000	500	1500	2500	2500
58	Անվաբացքի կարագավորում	6000	6000	6000	8000	10000	10000
59	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2000	2000	2000	5000	8000	8000
60	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2000	2000	2000	3000	4000	4000
61	Ղեկային կալունի հանում և տեղադրում	8000	8000	8000	15000	20000	20000
62	Ղեկային կալունի վերանորոգում	8000	8000	8000	15000	30000	30000
	6. Արգելակային համակարգ						
63	Արգելակման գլխ. կամ բանվ. գլանի հանում և տեղադրում	3000	3000	3000	4000	5000	5000
64	Արգելակման գլխ. կամ բանվ. գլանի նորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
65	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	5000	5000	5000	8000	8000	8000
66	Արգելակային համակարգի օդահանում	1500	1500	1500	2000	2000	2000
67	Արգելակային փողրակի փոխարինում	2000	2000	2000	3000	3000	3000
68	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2500	2000	2000	4000	4000	4000
69	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	6000	3000	3000	4000	4000	4000
70	Արգելակային սկավառակի փոխարինում	2000	2000	2000	3000	4000	4000
71	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	5000	5000
	7. Էլեկտրասարքավորում						
72	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1000	1000	1000	1000	1000	1000
73	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000	5000
74	Գեներատորի հանում և տեղադրում	3000	3000	3000	5000	5000	5000
75	Գեներատորի վերանորոգում	5000	5000	5000	6000	10000	10000
76	Մեկնարկիչի հանում և տեղադրում	3000	3000	3000	5000	5000	5000
77	Մեկնարկիչի վերանորոգում	5000	5000	5000	6000	10000	10000
78	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5000	5000	5000	6000	8000	8000
79	էլեկտրական տվիչների փոխարինում	2000	2000	2000	2000	3000	3000
80	էլեկտրական անջատիչների փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
81	Վառոցքի մոմերի փոխարինում	1500	1500	1500	2000	3000	3000
82	Կոնդիցիոների լիցքավորում	0	0	0	0	12000	12000
	8. Այլ ծառայություններ						

83	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	3000	3000	3000	3000	3000	3000
84	Անվադողի քանդում և հավաքում	1000	1000	1000	1000	1000	1000
85	Անիվի հավասարակշռում	1000	1000	1000	1500	1000	1000
86	CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ - ի համար*	1000	1000	1000	1000	1000	1000
87	Խառատային աշխատանքներ	1000	1000	1000	1000	1000	1000
88	Փականագործի աշխատանքներ	1000	1000	1000	1000	1000	1000
89	Քարշարկի ծառայություն *գին 1կմ, համար*	500	500	500	500	500	500
	Ընդամենը ծառայություններ	**304000**	**303500**	**324500**	**418500**	**592000**	**605000**
	ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ԳԱԶ,ՌԱՖ մակնիշի ա/մ	ՎԱԶ Մոսկվիչ մակնիշի առջևի և հետևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա, ՈՒԱԶ)	«Սադկո» մակնիշի բեռնատար և «ՊԱԶ» մակնիշի ավտոբուսա/մ	5տեղ մարդատար առջևի և հետևի տանող ա/մ	4x4 տիպի և միկրոավտոբուս միինվեն տիպի ա/մ
	1.Շարժիչ						
1	Բարձիկ	6000	6000	3600	8000	30000	30000
2	Շարժիչի փական	2400	2400	2400	3600	5000	5000
3	Շարժիչի փականի խցուկ	500	500	500	500	1000	1000
4	Ծնկաձև լիսեռի խցուկ	1200	1200	1200	1200	6000	6000
5	Ծնկաձև լիսեռի ներդիրներ	4800	4800	4800	4800	7000	7000
6	Հենակային տափողակ	500	500	500	500	500	500
7	Մխոց	4800	4800	4800	4800	15000	15000
8	Մխոցային օղակներ	9600	9600	9600	9600	18000	18000
9	Ատամնանիվ	2400	2400	2400	2400	5000	5000
10	Ատամնավոր փոկ	0	4800	0	4800	12000	12000
11	Շղթա	4800	3600	6000	1000	10000	10000
12	Հիդրոծգան	3600	2000	3600	1000	8000	8000
13	Հրիչ	4000	1200	1200	1000	1200	1200
14	Հիդրոհրիչ	3600	500	6000	1000	8000	8000
15	Բաշմակ	1200	1200	2500	1000	4800	4800
16	Հանգստարար	2400	2400	2400	1000	4800	4800
17	Խցուկ բաշխիչ լիսեռի	500	1200	500	1000	3600	3600
18	Շարժաթև	4800	3600	4800	4800	6000	6000
19	Միջադիր	2400	2400	2400	4000	6000	6000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ						
20	Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր*	3600	3600	3600	3600	3600	3600
21	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր*	4000	4000	4000	4000	4000	4000
22	Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր*	6000	6000	6000	6000	6000	6000
23	Յուղի զտիչ	1800	1800	1800	2400	8000	8000
24	Վառոցքի մոմ	2000	2000	2000	2000	8000	8000
25	Վառելանյութի մղիչ	20000	20000	20000	20000	48000	48000
26	Վառելանյութի զտիչ	2000	3000	3000	4000	12000	12000
27	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	500	500	500	500	500	500
28	Վառելանյութի փողրակ	2400	2400	2400	2400	6000	6000
29	Օդի զտիչ	3600	2400	3600	3600	12000	12000
30	Ջերմաստիճանային տվիչ	1000	1000	1000	1000	1000	1000
31	Յուղի տվիչ	2400	2400	2400	3000	3600	3600
32	Բաշխիչ լիսեռի տվիչ	3600	3600	3600	4000	6000	6000
33	Արագաչափի տվիչ	4800	4800	5000	5000	8000	8000
34	Ջրի տվիչ	1000	1000	1000	1000	1000	1000
35	Բենզոբաքի տվիչ	2400	2400	2400	2400	2400	2400
36	Մարման ընթացքի կարգավորիչ	1000	1000	1000	1000	1000	1000
37	Պարապ ընթացքի տվիչ	4800	4800	4800	6000	8000	8000
	3. Սառեցման և արտածման համակարգ						
38	Ռադիատոր	20000	20000	20000	20000	60000	60000
39	Ռադիատորի փողրակ	2400	2400	2400	3000	6000	6000
40	Թերմոստատ	3600	4800	7000	4800	8400	8400
41	Ջրի պոմպ	20000	8000	8000	8000	36000	36000
42	Սառեցման հեղուկ *1 լիտր*	3600	3600	3600	3600	3600	3600

43	Հոլովակ	4800	4800	4800	4800	8000	8000
44	Փոկ	6000	3600	6000	6000	15000	15000
45	Խլարարի ներդիր	600	600	600	600	1000	1000
46	Խլարարի կախոց	600	1200	600	600	2000	2000
47	Անուր (Խամուտ)	500	500	500	500	500	500
48	Խլարար	18000	18000	18000	18000	40000	40000
49	Ռեզոնատոր	1000	1000	1000	1000	1000	1000
50	Վառարանի ռադիատոր	2000	2000	2000	2000	2000	2000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ						
51	Կցորդման գլան	9600	9600	9600	9600	100	100
52	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	500	500	500	500	100	100
53	Կցորդման տանող սկավառակ	30000	18000	30000	30000	48000	48000
54	Կցորդման տարվող սկավառակ	12000	9000	12000	15000	40000	40000
55	Կցորդման առանցքակալ	7200	4800	6000	6000	18000	18000
56	ՓՏ-ի խցուկ	1200	1200	1200	1200	2400	2400
57	ՓՏ-ի առանցքակալ	10000	10000	10000	10000	1000	1000
58	ՓՏ-ի եղանիկ	3600	3600	3600	3600	1000	1000
59	ՓՏ-ի ատամնանիվ	8000	8000	8000	8000	1000	1000
60	Համաժամիչ	4800	2400	4800	4800	1000	1000
61	Մուֆտ	4800	4800	4800	4800	1000	1000
62	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1200	1200	1200	1200	1000	1000
63	ԱՓՏ-ի զտիչ	0	0	0	0	15000	15000
64	Տրանսմիսսիոն յուղ, *1 լիտր*	3600	3600	3600	3600	3600	3600
65	ԱՓՏ յուղ, *1 լիտր*	0	0	0	0	10000	10000
66	Հերմետիկ	3600	3600	3600	3600	3600	3600
	5. Կախոց						
67	Կիսասոնի	20000	20000	1000	1000	1000	1000
68	Կիսասոնու առանցքակալ	6000	6000	6000	6000	12000	12000
69	Կիսասոնու խցուկ	1200	1200	1200	1200	2000	2400
70	Կարգավորիչ տափողակ	600	600	600	600	600	1000
71	Կրոնշտեյն	2000	2000	2000	2000	2000	2000
72	Հոդակապ	0	25000	25000	0	40000	40000
73	Հոդակապի փոշեթիկնոց	0	2400	2400	0	4000	4000
74	Անվակունդի խցուկ	600	600	600	600	1000	1000
75	Անվակունդի առանցքակալ	4000	6000	3600	3600	20000	20000
76	Հարվածամեղմիչ	12000	20000	18000	20000	50000	50000
77	Հարվածամեղմիչի վռան	600	600	600	1000	1800	1800
78	Լծակի վռան	2000	2000	3600	4000	12000	12000
79	Գնդե հոդակապ	6000	4800	6000	6000	8000	8000
80	Կայունարարի վռան	2400	2400	2400	2400	6000	6000
81	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան	1200	1200	1200	1200	6000	6000
82	Զսպակի վռան	3000	0	2400	2000	0	6000
83	Ղեկային ձգան	10000	10000	10000	10000	18000	18000
84	Կայունարարի կանգնակ	4000	0	0	0	8000	8000
85	Ղեկային ձգանի ծայրակալ	2400	3600	3600	3600	8000	8000
86	Կարդանային լիսեռի խաչուկ	6000	6000	6000	10000	15000	15000
87	Հիդրոուժեղարարի յուղ, *1 լիտր*	3000	3000	3000	3000	6000	6000
	6. Արգելակային համակարգ						
88	Արգելակման գլխ. գլան	9600	9600	9600	9600	30000	30000
89	Վակուումային ուժեղարար	24000	20000	20000	20000	1000	1000
90	Արգելակման բանվ. գլան	3600	3000	3000	4000	6000	6000
91	Արգելակման գլանի վերանորոգման հավաքածու	1000	1000	1000	1000	1000	1000
92	Արգելակային փողրակ	2400	2400	2400	6000	9600	9600
93	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	6000	5000	6000	10000	40000	40000
94	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	10800	8000	8000	12000	30000	30000
95	Արգելակային սկավառակ	20000	15000	15000	20000	30000	30000
96	Ջեռքի արգելակի ճոպան	6000	5300	5300	5300	12000	9900
97	Արգելակային հեղուկ	2400	2400	2400	2400	2400	2400
	7. Էլեկտրասարքավորում						
98	Գեներատորի դիոդային կամրջակ	12000	12000	12000	12000	20000	20000
99	Գեներատորի ռելե	5000	5000	5000	5000	5000	5000

100	Գեներատորի առանցքակալ	5000	5000	5000	5000	8000	8000
101	Ստարտերի ռելե	1600	1600	1600	1600	10000	10000
102	Բենդեքս	10000	10000	10000	10000	18000	18000
103	Ստարտերի ածուխ	6000	6000	6000	6000	8000	8000
104	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	4800	4800	4800	4800	18000	18000
105	Լամպ	2400	2400	2400	3600	4800	4800
106	Բռնկման կողպեք	15000	15000	15000	10000	25000	25000
107	էլեկտրական անջատիչ	2400	2400	2400	2400	4800	4800
108	էլեկտրական տվիչ	10000	10000	10000	10000	24000	24000
109	Վառոցքային լարերի խուրց	7000	7000	7000	7000	10000	10000
110	Վառոցքի մոմի ծայրակալ	1000	0	1000	1000	3600	3600
111	Ապակելվացիչ	2400	2400	2400	2400	2400	2400
112	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *գին 1դ/մ վերանորգման համար*	3600	3600	3600	3600	3600	3600
	Ընդամենը պահեստամասեր	**570600**	**548900**	**560800**	**555600**	**1169900**	**1174600**
	Ընդամենը ըստ մակնիշների	**874600**	**852400**	**885300**	**974100**	**1761900**	**1779600**
	Ընդամենը ըստ չափաբաժնի	**7127900**					

Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկա-կազմակերպչական պայմաններ
Տեխ. սպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա ստորև բերված նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխ .սպասարկում կատարելու համար:

- փակ և պահպանվող տարածք , պահակային ծառայության կողմից
24 ժամ հսկողություն իրականացվող մինչև 30 և ավելի
ավտոմեքենաների համար:
- տաքացվող բոքսեր 10 և ավելի ամբարձիչների վրա միաժամանակ աշխատելու
հնարավորությամբ
- լվացման կետ ,ինչպես ավտոմոբիլի ,այնպես էլ մեքենա-
մասերի համար:
- դիտափոս
- դեֆորմացված թափքի ուղղման ստենդ ,զոդման անհրաժեշտ
սարքավորումներ ,այդ թվում նաև ալյումինի և չուգունի ,ներկման
.չորացման և հարդարման ժամանակակից միջոցներ:
- էվակուատոր 3.5տ նվազագույն բեռնատարողության ,որը կանչը ստանալուց հետո 30
րոպեի ընթացքում կարող է դուրս գալ տեխ.
սպասարկման կայանից դեպի վթարի (խափանման) վայր ՀՀ և Արցախի տարածք ,իսկ
անհրաժեշտության դեպքում նաև Վրաստան:
- կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով ,ունենա ծրագրեր և տեխնիկական գրականության ախտորոշում
կատարելու համար:
- ունենա էլեկտրական բնույթի խափանումները
վերացնելոհնարավորություն
- կատարի շարժիչի և նրա համակարգերի,ուժային և ղեկավարման համակարգերի ,ընթացքային մասի և թափքի առանձին
սարքավորումների,
ինչպես ընթացիկ ,այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ
- դողերի քանդման հավաքման և հավասարակշռման ստենդ
- անվաբացքի կարգավորման ստենդ
- ինժեկտորի լվացման և կարգավոման ստենդ
- մեղմիչների ստուգման ստենդ
- լուսարձակների կարգավորման ստենդ
- արգելակների ստուգման և կարգավորման ստենդ
- վերը նշված աշխատանքները կատարելու համար ունենա արհեստավարժ մասնագետներ ,ոչ պակլաս 5 տարվա
աշխատանքային փորձով
- կատարվող աշխատանքների վրա կատարվի ինժեներական վերահսկողություն :

Երաշխիքներ
Կատարված աշխատանքների համար -6 ամիս
Պահեստամասերի համար-12 ամիս
Ռետինե դետալների համար -6 ամիս
Բոլոր պահեստամասերը պետք է ունենան որակի
սերտեֆիկատներ և երաշխիքներ
Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում ՝ Երևան քաղաքի վարչական տարածքում
Պահեստամասերը / ռետինե դետալները / պետք է լինեն նոր , չօգտագործված
Անհրաժեշտության դեպքում ավտոմեքենայի նորոգումը պատվիրատուի պահանջով պետք է իրականացվի
պատվիրատուի նշված վայրում
Նշված պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում հայտը կարող է մերժվել

Ծանություն՝ Վերը նշվածը անհրաժեշտության դեպքում ենթակա է տեղում ստուգման մրցույթն ավարտելուց հետո: Հայտ ներկայացրած իրավաբանական անձանց ներկայացուցիչների մասնակցությամբ:	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
2017թ. մարտ	2017թ. սեպտեմբեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Վարչության պետ՝
Ա. Օսիկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԿԱՐԿՈՄԱՎՏՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակ. 1
«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002121630-001
ՀՎՀՀ 00131374

տնօրեն՝
Ա. Հովսեփյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<<14>> փետրվարի 2017 թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՔԿԿ(17)-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ընթացքում՝ ընդ որում				
		1-ին եռամսյակ	**2-րդ եռամսյակ**	**3-րդ եռամսյակ**	**4-րդ եռամսյակ**	Ընդամենը Տարի
1.	«Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ»	712790	2850000	5347000	7127900	**7127900**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ա. Օսիկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԱՐԿՈՄԱՎՏՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակ. 1
«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002121630-001
ՀՎՀՀ 00131374
տնօրեն՝
Ա. Հովսեփյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<< 13 >> փետրվարի 2017թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՔԿՎ(17)-1» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2016թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> փետրվարի 2017թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՔԿՎ(17)-1» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և ----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն